ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(2009 - 2014)

Խմբագրական խորհուրդ՝ **Ս.Ա. Առաքելյան** (նախագահ), **Ա. Հ. Մակարյան, Ա. Շ. Մարգարյան**

ԵՊՀ ԻՄ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ.

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տպարան, Իջևան, 2014, 82 էջ

Սույն վերլուծական ուսումնասիրության նպատակը Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի (ԵՊՀ ԻՄ) գործունեության արդյունավետության և կատարողականի գնահատումն է՝ գործունեության առանցքային ցուցանիշների /ԳԱՑ/ սահմանված լրակազմի օգնությամբ: Ներկայացված են ԵՊՀ ԻՄ գործունեության հիմնական ոլորտների ԳԱՑ-երը վերջին հինգ (երբեմն չորս) տարիների համար:Այն վեր է հանում ԵՊՀ ԻՄ ձեռքբերումները և թույլ կողմերը՝ նրա հետագա զարգացումը առավել արդյունավետ կազմակերպելու համար:Սույն վերլուծությունը կնպաստի նաև ԵՊՀ ԻՄ որակի ինքնագնահատման կարողությունների հզորացմանը:

Հասցեագրվում է բոլոր այն կառույցներին, որոնց գործունեությունն առնչվում է ԵՊՀ ԻՄ կառավարման և պլանավորման գործընթացներին:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան 5
Բնագավառ 1. Ընդունելություն և համակազմ 7
Բնագավառ 2. Ուսումնական գործընթաց 23
Բնագավառ 3. Ռեսուրսներ և կառավարում 41
Բնագավառ 4. Ենթակառուցվածքներ 59
Բնագավառ 5. Գիտություն և նորամուծություն 70
Բնագավառ 6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն 78

Նախաբան

Սույն վերլուծական ուսումնասիրությունը կատարվել է ԵՊՀ ԻՄ 2011-2015 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի մշակման գործընթացի շրջանակներում 2013/14 ուստարում՝ ԵՊՀ ԻՄ համապատասխան կառույցների մասնակցությամբ:

Ուսումնասիրության ստորև ներկայացվող արդյունքներն ունեն երկակի նշանակություն: Առաջին հերթին այս ցուցանիշները կարող են հիմք ծառայել բուհի ինքնավերլուծության ու գործունեության արդյունավետության գնահատման, ինչպես նաև եռամյա և տարեկան հաշվետվությունների ստեղծման համար, մյուս կողմից դրանք կարող են օգտագործվել Համալսարանի ռազմավարական պլանավորման գործընթացում՝ ներքին միջավայրի վերլուծության և հաջորդ SWOT-ի /ուժեղ և թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների և վտանգների/ որոշման համար:

ԵՊՀ ԻՄ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների /ԳԱՑ/ առաջարկվող լրակազմն անհրաժեշտ է ռազմավարական պլանավորման գործընթացի տարբեր փուլերի և քայլերի արդյունքները չափելու և վերլուծելու համար: Որպես չափիչ գործիք՝ ԳԱՑ-երը կոնկրետ են, պարզ և հաշվարկելի: Դրանց առկայությունը պլանավորման գործընթացում ապահովում է վերջինիս նպատակների, խնդիրների և ռազմավարության գործնականությունը:

Միջավայրով ուղղորդվող ռազմավարական պլանավորումը ենթադրում է բուհի գործունեության (կամ կատարողականի) գնահատում և համեմատում՝ բուհի կամ նրա շահակիցների կողմից սահմանված «ցանկալի» ցուցանիշների հետ՝ ապահովելով կապը բուհի և միջավայրի կարևորագույն տարրերի միջև: ԳԱՑ–երն այն անհրաժեշտ հենքն են, որոնք կապակցում են բուհի կարևորագույն գործառույթները պլանավորման գործընթացի հետ: Այս ցուցանիշների օգտագործումը ԵՊՀ ԻՄ ռազմավարական պլանավորման գործընթացում մեզ հնարավորություն է տվել հիմնական ռազմավարական ոլորտներում համեմատել ԵՊՀ ԻՄ գործունեության արդյունքները կամ կատարողականը այլ բուհերի, ԵՊՀ ԻՄ նախորդ տարիների և պլանավորված ցուցանիշների հետ:

Առաջարկվող ցանկում կա ցուցանիշների երկու տեսակ, որոնք ձևավորում են ԳԱՑ-երի լրակազմը: Առաջինը գործ ունի Համալսարանի հիմնական գործունեության որոշակի արդյունքի չափման հետ, արդյունք, որի նկատմամբ ԵՊՀ ԻՄ ունի վերահսկողության հնարավորություն: Ցուցանիշների այս խումբը կոչվում է գործունեության արդյունքի գնահատման ԳԱՑ-եր: ԳԱՑ–երի երկրորդ խումբը կապված է այն պայմանների չափման հետ, որոնք անմիջականորեն ազդում են բուհի «առողջական» վիճակի և բարեկեցության վրա, պայմաններ, որոնց նկատմամբ բուհը կարող է ունենալ փոքր վերահսկողություն կամ ընդհանրապես չունենալ:

Համաձայն ընդունված մեթոդաբանության՝ ուսումնասիրությունը կատարելիս իրականացվել են հետևյալ հաջորդական քայլերը:

Առաջին քայլը, որ կատարվել է ԵՊՀ ԻՄ ԳԱՑ-երի համապարփակ ցանկի կազմման ուղղությամբ, համալսարանի գործունեության հիմնական ոլորտների պարզումն է, որտեղից էլ ընտրվել են ամենակարևոր ԳԱՑ-երը: Առանձնացվել են ԵՊՀ ԻՄ գործունեության 6 հիմնական ոլորտներ.

1. Ընդունելություն և համակազմ
2. Ուսումնական գործընթաց
3. Ռեսուրսներ և կառավարում
4. Ենթակառուցվածքներ
5. Գիտություն և նորամուծություն
6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն:

Այնուհետև սահմանվել են ԵՊՀ ԻՄ գործունեության գնահատման առանցքային և «առողջական» վիճակի ցուցանիշները /ԳԱՑ-երը/:

Կատարվել են ԳԱՑ-երի ուսումնասիրություն և վերլուծություն ըստ տարիների՝ 2009-2014 թթ. ժամանակահատվածի համար: Ստորև բերված է ԵՊՀ ԻՄ ԳԱՑ-երի համապարփակ ցանկը՝ բաղկացած 64 ցուցանիշներից և դասակարգված ըստ ԵՊՀ ԻՄ գործունեության հիմնական ոլորտների:

Առաջարկվող վերլուծական ուսումնասիրությունը հասցեագրվում է ԵՊՀ ԻՄ և նրա ստորաբաժանումների վարչակազմերին, բոլոր այն կառույցներին, որոնց գործունեությունն առնչվում է ԵՊՀ ԻՄ կառավարման և պլանավորման գործընթացներին:

ԲՆԱԳԱՎԱՌ 1. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱԶՄ

1.1.	Դիմորդների թիվը (ըստ կրթական ծրագրերի և ուղղությունների)
1.2.	Դիմորդների բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում
1.3.	Դիմորդների բաշխումն ըստ մարզերի
1.4.	Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի (անվճար, վճարովի)
1.5.	ԵՊՀ ԻՄ ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում
1.6.	Մրցութային ցուցանիշն ըստ կրթական ծրագրերի (դիմորդների և ընդունվածների հարաբերությունը)
1.7.	Իգական սեռի հաշվեկշիռը դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքում
1.8.	Օտարերկրյա դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին
1.9.	Հեռակա ուսուցման դիմորդների թիվը և հարաբերությունն ընդունվածների թվին
1.10.	Հիմնական ուսանողական համակազմը (ըստ կրթական ծրագրերի)
1.11.	Օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հիմնական համակազմում
1.12.	Հեռակա ուսուցման համակազմը (բակալավրիատ) և հաշվեկշիռը հիմնական համակազմում
1.13.	Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ծավալում (ըստ ուղղությունների)
1.14.	Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն հիմնական համակազմում (ըստ ուղղությունների)

Ցուցանիշ 1.1. Դիմորդների թիվը (ըստ կրթական ծրագրերի և ուղղությունների)

Ցուցանիշ 1.1	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Դիմորդների թիվն ըստ կրթական ծրագրերի և ուղղությունների	606	581	155	630	490
Բակալավրիատ (առկա)	368	339	7	347	288
Հումանիտար գիտ. ֆակուլտետ	174	163	3	167	144
Բնական գիտ. ֆակուլտետ	63	49	3	45	43
Տնտեսագիտ. ֆակուլտետ	93	90	1	108	81
Կիրառական արվեստի ֆակուլտետ	38	37	-	27	20
Բակալավրիատ (հեռակա)	238	242	148	272	202
Մագիստրատուրա	-	-	-	11	9
Կիրառական արվեստ	-	-	-	11	4

Առկա ուսուցման դիմորդների թիվը վերջին տարիներին նվազելու միտում ունի,որը պայմանավորված է ինչպես դպրոցների շրջանավարտների,այնպես էլ ԲՈՒՀ ընդունվելու ցանկություն ունեցողների թվի նվազմամբ (բացառություն է կազմում 2011թ.՝պայմանավորված հանրակրթական դպրոցների շրջանավարտների բացակայությամբ):

2012թ.-ից հաշվառված են նաև մագիստրատուրայի դիմորդները:



Ցուցանիշ 1.2. Դիմորդների բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում

Ցուցանիշ 1.2	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Ընդհանուր դիմորդների թիվը	14944	14006	2649	16155	13439
ԵՊՀ ԻՄ դիմորդների թիվը(առկա)	368	339	7	347	288
ԵՊՀ ԻՄ դիմորդների բաժնեմասը	2,46%	2,42%	0,26%	2,15%	2,14%

ԵՊՀ ԻՄ դիմորդների բաժնեմասը համեմատաբար կայուն է (բացառություն է կազմում 2011թ.՝ պայմանավորված հանրակրթական դպրոցների շրջանավարտների բացակայությամբ) և կենտրոնոցված ընդունելության համակարգի ընդհանուր հոսքում կազմում է 2,2-2,5%:

Ցուցանիշ 1.3	2009/10		2010/11		2011/12		2012/13		2013/14	
Երևան	6	1,6%	2	0,6%	11	7,1%	4	0,6%	14	2,9%
Կոտայք	3	0,8%	2	0,6%	5	3,2%	8	1,27%	5	1,1%
Արմավիր	0	0	0	0	0	0	0	0	0	0
Գեղարքունիք	3	0,8%	6	1,8%	3	2%	2	0,3%	6	1,3%
Շիրակ	0	0	2	0,6%	2	1,3%	1	0,15%	2	0,4%
Արարատ	0	0	0	0	1	0,6%	1	0,15%	1	0,2%
Լոռի	9	2,5%	2	0,6%	4	2,6%	8	1,27%	4	0,9%
Արագածոտն	0	0	0	0	0	0	0	0	0	0
Սյունիք	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տավուշ	344	94%	322	95%	127	81,9%	604	95,8%	454	92,7%
Վայոց ձոր	1	0,3%	0	0	0	0	0	0	0	0
Այլ երկրներից	2	0,5%	3	0,9%	2	1,3%	2	0,3%	4	0,9%
Ընդամենը	368		339		155		630		490	



Ցուցանիշ 1.3. Դիմորդների բաշխումն ըստ մարզերի

Դիմորդների 80%-ից ավելին Տավուշի մարզից են, որը պայմանավորված է տարածաշրջանում բարձր հեղինակություն և որակյալ կրթություն ապահովելու,ինչպես նաև միակ պետական բարձրագույն հաստատություն լինելու փաստերով:

Երևան քաղաքից և այլ մարզերից դիմորդների փոքր տոկոսը պայմանավորված է այդ տարածաշրջանում գործող բուհերի առկայությամբ և ԵՊՀ ԻՄ-ի մեծ հեռավորության վրա գտնվելու պատճառով /աշխարհագրական դիրքով/:Ընդհանուր հիմունքներով դիմած օտարերկրացիների թիվը վերջին տարիներին տատանվել է 0,3%-ից մինչև 1,3%:



Ցուցանիշ 1.4. Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի (անվճար, վճարովի)

Ցուցանիշ 1.4	2009/10	2010/11	2012/13	2013/14
Բակալավրիատ	253	260	178	209
Անվճար	108	50	43	41
Վճարովի	145	210	135	168
Մագիստրատուրա	-	-	10	4
Անվճար	-	-	2	2
Վճարովի	-	-	8	2

Պետության կողմից հատկացված անվճար տեղերի թիվը 2010/11 ուստարում ավելի քան երկու անգամ կրճատվեց, որի արդյունքում ընդունելության համակազմում կտրուկ ավելացել է վճարովի համակարգում սովորող ուսանողների թիվը:

2011թ.՝պայմանավորված հանրակրթական դպրոցների շրջանավարտների բացակայությամբ,առկա ուսուցման համակարգում ընդունելություն չի իրականացվել:

2012թ.-ից հաշվառված են նաև մագիստրատուրա ընդունվածների թիվը:



Ցուցանիշ 1.5. ԵՊՀ ԻՄ ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում

Ցուցանիշ 1.5	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Կենտրոնացված ընդունելության ծավալը	12165	10314	1672	12544	10886
ԵՊՀ ԻՄ ընդունվածների թիվը	253	260	139	178	209
ԵՊՀ ԻՄ բաժնեմասը	2,08%	2,52%	8,31%	1,42%	1,92%

Վերջին տարիներին ԵՊՀ Իմ ընդունվածների մասնաբաժինը կենտրոնացված ընդունելության համակարգում փոփոխական է, որը պայմանավորված է ինչպես դիմորդների տարբեր քաղաքների բուհեր դիմելու հնարավորությամբ,այնպես էլ կենտրոնացված քննություններին նրանց պատրաստվածության աստիճանից:



Ցուցանիշ 1.6. Մրցութային ցուցանիշն ըստ կրթական ծրագրերի (առկա դիմորդների և ընդունվածների հարաբերությունը)

Ցուցանիշ 1.6	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Բակալավրիատի (առկա) դիմորդների թիվը	368	339	7	347	288
Ընդունվածների թիվը	253	260	-	178	209
Մրցութային ցուցանիշը (բակ.)	1,45	1,30	-	1,95	1,38
Մագիստրատուրայի դիմորդների թիվը	-	-	-	11	9

Ընդունվածների թիվը	-	-	-	10	4
Մրցութային ցուցանիշը (բակ.)	-	-	-	1,1	2,25

Բակալավրիատի ընդունելության ծավալների փոփոխության հետևանքով մրցութային ցուցանիշները տատանվել են՝ 1,3-ից հասնելով 1,95-ի, որը առաջին հերթին պայմանավորված է միասնական քննություններից դիմորդների ստացած համեմատաբար ցածր գնահատականներով:

2011թ.՝պայմանավորված հանրակրթական դպրոցների շրջանավարտների բացակայությամբ,առկա ուսուցման համակարգում ընդունելություն չի իրականացվել:
2012թ.-ից հաշվառված են նաև մագիստրատուրա ընդունվածներ թիվը:



Ցուցանիշ 1.7. Իգական սեռի հաշվեկշիռը դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքում

Ցուցանիշ 1.7	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
ԵՊՀ ԻՄ դիմորդների թիվը	368	339	155	630	490
ԵՊՀ ԻՄ իգական սեռի դիմորդների թիվը	236	198	65	376	255
Հարաբերությունը (դիմորդներ)	64,13%	58,41%	41,9%	59,7%	52,1%
ԵՊՀ ԻՄ ընդունվածների թիվը	253	260	137	395	404

ԵՊՀ ԻՄ իգական սեռի ընդունվածների թիվը	166	157	57	267	226
Հարաբերությունը (ընդունվածներ)	65,61%	60,38%	41,6%	67,6%	56%

Իգական սեռի բաժնեմասը ԵՊՀ ԻՄ դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքում հիմնականում տատանվում է 52%-68% շրջակայքում(բացառություն է կազմում 2011թ.),իսկ ըստ մասնագիտությունների պատկերը խիստ տարբեր է:



Ցուցանիշ 1.8. Օտարերկրյա դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին

Ցուցանիշ 1.8	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14

Դիմորդների թիվը (բակալավրիատ,առկա)	4	3	0	1	2
Ընդունվածների թիվը	2	2	2	1	2
Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին	2	1,5	0	1	1
Դիմորդների թիվը (մագիստրատուրա)	-	-	-	0	0
Ընդունվածների թիվը	-	-	-	0	0
Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին	-	-	-	-	-
Դիմորդների թիվը (բակալավրիատ,հեռակա)	-	-	2	0	3
Ընդունվածների թիվը	-	-	2	0	3
Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին	-	-	1	0	1

Այս ցուցանիշը հարաբերականորեն կայուն է, որը դեռևս ցանկալի մակարդակ չէ:Հարկավոր է ակտիվացնել աշխատանքները օտարերկրյա /հիմնականում Վրաստան, Ռուսաստան/ դիմորդներ ներգրավելու ուղղությամբ:



Ցուցանիշ 1.9. Հեռակա ուսուցման դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին

Ցուցանիշ 1.9	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Դիմորդների թիվը	237	249	148	272	202
Ընդունվածների թիվը	207	222	137	217	195
Հարաբերությունը	1,14	1,12	1,08	1,25	1,04

Այս ցուցանիշը տատանվում է 1,0-ից 1,3-ի սահմաններում, ինչը վկայում է հեռակա ուսուցման համակարգի դիմորդների (հիմնականում առկա ուսուցման համակարգից դուրս մնացած) բավարար պատրաստվածության աստիճանի մասին:



Ցուցանիշ 1.10. Հիմնական ուսանողական համակազմը (ըստ կրթական ծրագրերի)

Ցուցանիշ 1.10	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Հիմնական ուսանողական համակազմը	1777	1954	1673	1377	1535
Բակալավրիատ	1174	1130	811	663	611
Հումանիտար գիտ. ֆակուլտետ	531	533	397	332	313
Բնական գիտ. ֆակուլտետ	208	172	117	77	65
Տնտեսագիտ. ֆակուլտետ	296	290	200	171	156
Կիրառական արվեստի ֆակուլտետ	141	137	97	83	77
Օտարերկրյա ուս. համակազմը	2	2	-	3	5
Հեռակա ուսուցում	601	822	862	704	924
Մագիստրատուրա	-	-	-	11	13

Վերջին չորս տարիների ընթացքում առկա ուսուցման համակարգի համակազմը նվազել է պայմանավորված հանրակրթական դպրոցների դիմորդների թվի նվազմամբ,ինչպես նաև 2011թ. բացակայությամբ,սակայն հեռակա ուսուցման համակարգի ընդունելության աճ է նկատվում,ինչը պայմանավորված է երկրորդ մասնագիտություն ստանալու ցանկություն ունեցող դիմորդների թվի աճի,ինչպես նաև 2012թ. սկսած “սերվիս” մասնագիտության ավելացմամբ: 2012թ.-ից ուսանողական համակազմը համալրվել է նաև մագիստրոսական մեկ ծրագրով՝ կիրառական արվեստ մասնագիտությամբ:



Ցուցանիշ 1.11. Օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հիմնական համակազմում

Ցուցանիշ 1.11	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
ԵՊՀ ԻՄ ուսանողների համակազմը	1777	1954	1662	1607	1535
Օտարերկյա ուսանողների համակազմը, այդ թվում՝	2	2	2	3	5
Բակալավրիատ	2	2	2	3	5
Մագիստրատուրա	-	-	-	0	0
Օտարերկյա ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	0,112%	0,102%	0,12%	0,218%	0,326%

Օտարերկրյա ուսանողների թիվը ընդհանուր համակազմում չնչին տոկոս է կազմում:Այս բացը լրացնելու համար նախատեսված է աշխատանքների համալիր ծրագիր՝օտարերկրյա ուսանողների թվաքանակի ավելացման համար,որը կնպաստի ԲՈՒՀ-ի միջազգայնացմանն ու արտաքին կապերի համալրմանը:



Ցուցանիշ 1.12. Հեռակա ուսուցման հաշվեկշիռը հիմնական համակազմում

Ցուցանիշ 1.12	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Հիմնական համակազմը	1733	1954	1673	1377	1535
Հեռակա ուսուցման համակազմը	601	822	849	704	924
Հեռակա ուսուցման հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	34,7%	42,1%	50,7%	51,1%	60,2%

Բակալավրիատում հեռակա ուսուցումը կիրառվում է արդեն յոթ տարի և հիմնական համակազմում հասել է մինչև 61%-ի: Ենթադրվում է, որ առաջիկա տարիների ընթացքում այդ տոկոսը կպահպանվի,որը հիմնականում պայմանավորված է առկա ուսուցման համակարգի ուսանողների թվի նվազմամբ:



Ցուցանիշ 1.13. Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ծավալում

(ըստ ուղղությունների)

Ցուցանիշ 1.13	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Ընդունելության ընդհանուր ծավալը, այդ թվում վճարովի՝	458	482	138	432	404
Բակալավրիատ(առկա)	143	210	-	135	168
Հեռակա ուսուցում	207	222	138	246	192
Մագիստրատուրա	-	-	-	8	2
Ընդամենը վճարովի	352	432	138	389	362
Հաշվեկշիռն ընդունելության ծավալում (%)	76,9	89,6	100	90,1	89,6

Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը ընդունելության ընդհանուր ծավալում աճել է 77%-ից 90%-ի, որի հետևանքով ավելացել է նաև վճարովի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում:



Ցուցանիշ 1.14. Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն հիմնական համակազմում

(ըստ ուղղությունների)

Յուցանիշ 1.14	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Հիմնական համակազմ	1775	1970	1673	1582	1535
Բակալավրիատ(առկա)	746	776	557	438	474
Հեռակա ուսուցում	618	838	862	935	903
Մագիստրատուրա	-	-	-	8	9
Ընդամենը վճարովի	1364	1612	1419	1381	1386
Հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	76,8	81,6	84,8	87,3	90,3

Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում ավելացել է 76,8%-ից հասնելով 90,3%-ի:Այս գործընթացը շարունակվելու է առաջիկա տարվա ընթաքում ևս՝ պայմանավորված 2011թ. առկա ուսուցման համակարգի ընդունելության բացակայությամբ:



ԲՆԱԳԱՎԱՌ 2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2.1.	Անցումն առաջինից երկրորդ կուրս
2.2.	Շրջանավարտներն ըստ կրթական ծրագրերի
2.3.	Հիմնական դասախոսական կազմը (բաշխումն ըստ պաշտոնների, գիտական աստիճանով/առանց աստիճանի)
2.4.	Դասախոսական կազմի (լրիվ հաստիքային համարժեքով) բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար)
2.5.	Դասախոսական կազմի տարեկան համալրումը (այդ թվում՝ ասպիրանտուրայից)
2.6.	Դասախոսական հաստիքների օգտագործման գործակիցը (հաստիքների թիվ/ընդհանուր դասախոսների թիվ)
2.7.	Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը
2.8.	Որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը
2.9.	Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը
2.10.	Ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերությունը
2.11.	Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը
2.12.	Դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը (այդ թվում՝ ըստ ուղղությունների)
2.13.	Հրատարակված ուսումնամեթոդական նյութերի և մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների քանակը
2.14.	Առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը (ըստ ֆակուլտետների)
2.15.	Ուսանողական հարցման արդյունքները (ըստ ֆակուլտետների)

Ցուցանիշ 2.1. Անցումն առաջինից երկրորդ կուրս

Ցուցանիշ 2.1	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Բակալավրի ծրագրեր (%)	96	103	88,7	-	94
Մագիստրոսական ծրագրեր (%)	-	-	-	-	90

Նկատելի է առաջինից երկրորդ կուրս անցման կայուն ցուցանիշ:2011/12 ուստարում գրանցված 103%-ը պայմանավորված է բանակ զորակոչված և զորացրված ուսանողների թվերի տարբերությամբ:

Նախորդ տարում առկա ուսուցման համակարգում և մագիստրատուրայում բացակայում են երկրորդ կուրս փոխադրվողները, քանի որ 2011/12 ուստարում առկա ուսուցման համակարգում ընդունելություն չի իրականացվել, իսկ մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպվել է 2012թ.-ից սկսած:



Ցուցանիշ 2.2. Շրջանավարտներն ըստ կրթական ծրագրերի

Ցուցանիշ 2.2	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Բակալավրիատ	277	400	439	420	393
Մագիստրատուրա	-	-	-	-	9

Վերջին երկու տարիներին ընդունելության ծավալների նվազման հետ նվազել է նաև շրջանավարտների ընդհանուր թիվը: 2010/11 ուս. տարում շրջանավարտների թվի կտրուկ ավելացումը պայմանավորված է հեռակա ուսուցման համակարգի առաջին շրջանավարտների առկայությամբ:



Ցուցանիշ 2.3. Հիմնական դասախոսական կազմը
(ներառյալ ԵՊՀ-ից ներքին համատեղության կարգով հրավիրված դասախոսներ)

Ցուցանիշ 2.3	2009/10		2010/11		2011/12		2012/13		2013/14	
Պրոֆեսոր	4	4,1%	5	4,5%	5	5%	3	3%	3	2,6%
Դոցենտ	27	27,6%	35	31,5%	41	41,4%	27	27,8%	32	26,1%
Ասիստենտ և դասախոս	67	68,4%	71	64,0%	53	64,0%	67	69,2%	72	71,3%
Ընդամենը	98		111		99		97		107	
Այդ թվում՝գիտ. աստիճանով	39	39,8%	51	45,9%	38	38,3%	39	40,2%	53	49,6%

Հիմնական դասախոսական կազմում գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը հասել է մոտ 50%-ի, որը բավականին լավ ցուցանիշ է: Վերջին տարում պրոֆեսորների թիվը մնացել է նույնը, իսկ դոցենտների թիվը ավելացել է հինգով:Ասիստենտների թվի աճը պայմանավորված է դասախոսների գիտական ուղղվածությամբ ծավալված աշխատանքների ակտիվացմամբ:



Ցուցանիշ 2.4. Դասախոսական կազմի (լրիվ հաստիքային համարժեքով) բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար)

Ցուցանիշ 2.4	2009/10		2010/11		2011/12		2012/13		2013/14	
Հիմնական և համատեղութ.	133	84,2%	135	88,2%	121	93,7%	112	88,8%	107	82,9%
Ժամավճար	25	15,8%	18	11,8%	8	6,3%	14	11,2%	22	17,1%
Ընդամենը	158		153		129		126		129	

Հիմնական և համատեղությամբ դասավանդող դասախոսների թիվը նվազել է վերջին երեք տարիներին՝ պայմանավորված 2011թ.-ից սկսած ուսանողների թվի,հետևաբար նաև ամբիոնային ծանրաբեռնվածության նվազմամբ,իսկ ժամավճարային հիմունքներով դասավանդողների տոկոսը փոփոխական է, որը կախված է տվյալ ուստարվա առանձնահատկություններից:



Ցուցանիշ 2.5. Դասախոսական կազմի տարեկան համալրումը

Ցուցանիշ 2.5	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Դասախոսական կազմի համալրումը	1	2	-12	-2	10
Հիմնական դասախոսական կազմ	98	111	99	97	107

Դասախոսական կազմի համալրումը փոքր տոկոս է կազմում հիմնական դասախոսական կազմում, քանի որ դասավանդվող առարկաների և դասախոսների ցանկում էական փոփոխություններ չեն կատարվել: 2011թ.-ից սկսած դասախոսների թիվը նվազել է՝ պայմանավորված ուսանողների թվի հետևաբար նաև ամբիոնային ծանրաբեռնվածության նվազմամբ,իսկ վերջին տարում կարծես թե վերականգնվում է սկզբնական ցուցանիշը:



Ցուցանիշ 2.6. Դասախոսական հաստիքների օգտագործման գործակիցը (հաստիքների թիվ/ընդհանուր դասախոսների թիվ)

Ցուցանիշ 2.6	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Ընդհանուր դասախոսական կազմ	133	135	121	112	129
Հաստիքներ	106,0	102,25	87,0	79,75	74,75
Հաստիքների թիվ/դասախոսների թիվ հարաբերակցությունը	0,79	0,75	0,72	0,71	0,58

Վերջին տարիներին նկատվել է հաստիքների օգտագործման գործակցի որոշակի անկում, ինչը վկայում է հաստիքների պլանավորման դեռևս անկատար գործընթացի մասին:



Ցուցանիշ 2.7. Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը (ներառյալ ԵՊՀ-ից ներքին համատեղության կարգով հրավիրված դասախոսները)

Ցուցանիշ 2.7	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Մինչև 35 տարեկան	23	26	16	21	25
35-65 տարեկան	67	75	73	68	80
65-ից բարձր	8	10	10	8	10
Ընդամենը	98	111	99	97	115
Միջին տարիք	46	46,1	49,1	48	48

Վերջին երեք տարիներին հիմնական դասախոսական կազմում նկատելի է երիտասարդ և միջին տարիքային խմբերի աճ: Վերջին տարում հիմնական դասախոսական կազմի աճի պատճառով միջին տարիքը կազմում է 48, որը տարածաշրջանային ԲՈՒՀ-ի համար բավականին լավ ցուցանիշ է:



Ցուցանիշ 2.8. Որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը

Ցուցանիշ 2.8	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Մասնագիտական	4	2	2	1	7
Մանկավարժական	2	-	30	32	77
Համակարգչային	5	1	24	33	4
Այլ	3	2	2	3	7
Մեկ ուսումնական տարում որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը	8	4	56	69	95

Վերջին տարիների ընթացքում որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը աճել է՝ պայմանավորված մասնաճյուղում (համաձայն սահմանված ժամանակացույցի) համակարգված վերապատրաստումներ անցկացնելու հանգամանքով: Պլանավորվում է իրականացնել նաև մասնագիտական որակավորման բարձրացման համալիր ծրագիր՝ որը կնպաստի վերոնշված թերացման վերացմանը:



Ցուցանիշ 2.9. Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը

Ցուցանիշ 2.9	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Հիմնական դասախոսական կազմ	98	111	99	97	107
Իգական սեռի դասախոսներ	56	55	51	52	61
Իգական սեռի հաշվեկշիռը (%)	57,1	49,5	51,5	53,6	57,0

Վերջին տարիներին հիմնական դասախոսական կազմում իգական սեռի հաշվեկշիռը աճել է, որը պայմանավորված է նաև արական սեռի դասախոսների թվի նվազմամբ:



Ցուցանիշ 2.10. Ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերությունը

Ցուցանիշ 2.10	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Ուսանողներ	1176	1132	1673	1377	1535
Դասախոսական հաստիքներ	106,0	102,25	87,0	79,75	74,75
Ուսանող/դասախոս հարաբերությունը	11,09	11,07	19,23	17,27	20,54

Ուսանող դասախոս հարաբերակցությունը տատանվում է 11,1-ից մինչև 20,5, որը նախատեսվում է հասցնել օպտիմալ քանակի՝ 13-ի:

Ուսանողների թվաքանակը ընդգրկում է նաև հեռակա ուսուցման համակարգով սովորողներին:



Ցուցանիշ 2.11. Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը

Ցուցանիշ 2.11	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Ուսանողներ	1176	1132	1673	1377	1535
Ուսումնաօժանդակ կազմ	39	44	38	26	25
Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը	30,2	25,7	44,7	53,0	61,4

Նկատվում է ցուցանիշի աճ, որը պայմանավորված է ուսանողների և ուսումնաօժանդակ կազմի թվաքանակների անհավասարաչափ փոփոխությամբ:



Ցուցանիշ 2.12. Դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը (ըստ ուղղությունների)

Ցուցանիշ 2.12	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	650	725	713	732	886
Բնական գիտությունների ֆակուլտետ	622	653	592	717	818
Տնտեսագիտության ֆակուլտետ	597	707	698	607	785
Կիրառական արվեստի ֆակուլտետ	629	820	636	671	676
Համահամալսարանական ամբիոններ	713	861	728	738	687
Համահամալսարանական միջինը	643	753	667	693	770

Սկսած 2010/11 ուստարվանից միջին տարեկան բեռնվածությունը սահմանված նորմերի փոփոխության համաձայն 640 ժամից հասցվել է 700: Հումանիտար և բնագիտական գիտությունների ֆակուլտետների համեմատությամբ կիրառական արվեստի և տնտեսագիտության ֆակուլտետներում միջին տարեկան բեռնվածությունն ավելի ցածր է, որը հիմնականում պայմանավորված է մասնագիտական առարկաների դասավանդման առանձնահատկություններով:



Ցուցանիշ 2.13. Հրատարակված ուսումնամեթոդական նյութերի և մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների քանակը

Ցուցանիշ 2.13	2009/10	2010/11	2011/12	2012/13
Ուսումնամեթոդական նյութերի քանակը	12	2	16	97
Հիմնական դասախոսական կազմը	98	111	99	129
Մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների թիվը	0,1	0,02	0,16	0,75

Վերջին տարին կտրուկ ավելացել է մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների թիվը, որը պայմանավորված է 2013թ.-ին մասնաճյուղում դասավանդվող յուրաքանչյուր առարկայի դասախոսությունների ձեռնարկ (կամ նրա էլեկտրոնային տարբերակը) ունենալու տնօրենության հանձնարարականով:



Ցուցանիշ 2.14. Առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը (ըստ ֆակուլտետների)

Ցուցանիշ 2.14	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ(%)	59	69,7	75,1	85,5	74,1
Բնական գիտությունների ֆակուլտետ (%)	56	65,3	73,1	74,4	50,8
Տնտեսագիտության ֆակուլտետ (%)	55	55,7	55,3	56,3	59,6
Կիրառական արվեստի ֆակուլտետ (%)	45	56,9	55,3	75,8	57,9
Միջին տարեկան ցուցանիշը(%)	53,75	61,9	64,7	73	60,6

Մինչև 2013/14 ուստարին առաջադիմության (լուծարքային շրջանից առաջ) միջին տարեկան ցուցանիշը տարեցտարի աճում է, ինչը պայմանավորված է ընթացիկ քննությունները թեստային համակարգով անցկացնելու հանգամանքով, սակայն վերջինիս կատարելագործման և բարդացման արդյունքում այս տարում գրեթե բոլոր ֆակուլտետներում գրանցվել է առաջադիմության անկում:



Ցուցանիշ 2.15. Ուսանողական հարցման արդյունքները (ըստ ֆակուլտետների)

Ցուցանիշ 2.15	2009/10		2010/11		2011/12		2012/13	
	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	4,37	4,47	4,53	4,45	4,59	4,55	4,57	4,52
Բնական գիտությունների ֆակուլտետ	4,37	4,27	4,39	4,43	4,43	4,38	4,53	4,25
Տնտեսագիտական ֆակուլտետ	4,36	4,44	4,64	4,53	4,61	4,54	4,61	4,58
Կիրառական արվեստի ֆակուլտետ	4,46	4,64	4,67	4,55	4,44	4,46	4,63	4,66
Համահամալսարանական ամբիոններ	4,15	4,37	4,46	4,47	4,50	4,59	4,57	4,46

Ուսանողների կողմից դասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման հարցաթերթիկը բաղկացած է 18 հարցերից, որոնցից 5-ը վերաբերում են դեկանի,դեկանատի գործավարի և ուսումնական խորհդատուների ուսանողների հետ տարվող աշխատանքին: Բոլոր հարցերը գնահատվում են 5 միավորանոց սանդղակով:

Ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները, ուսանողներն ընդհանուր առմամբ գոհ են դասավանդողների մասնագիտական և մանկավարժական որակներից ու դասավանդման մեթոդների կիրառման արդյունավետությունից:



ԲՆԱԳԱՎԱՌ 3.

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

3.1.	Աշխատողների ընդհանուր թիվը, ուսանող/աշխատող
3.2.	Դասախոսական կազմ/ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը
3.3.	Աշխատողների հոսունությունը՝ ընդունված/ազատված (%)
3.4.	Տարեկան բյուջեն (տարեկան ընդհանուր եկամուտը՝ ֆինանսական և նյութական, հազար դրամ)
3.5.	Օպերատիվ բյուջեն (ծախսերի ծավալ/ուսանող և մուտքերի ծավալ/ուսանող հարաբերակցությունները, հազար դրամ)
3.6.	Տարեվերջից տեղափոխվող մնացորդը (հազար դրամ)
3.7.	Արտաբյուջետային մուտքեր (ըստ աղբյուրների, ընդհանուր), հաշվեկշիռը մուտքերում (հազար դրամ)
3.8.	Ուսումնական (ուսուցման) ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում
3.9.	Ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (հազար դրամ)
3.10.	Ուսման միջին վարձաչափը (հազար դրամ)
3.11.	Դասախոսական կազմի միջին աշխատավարձը, հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին
3.12.	Աշխատավարձ և սոցիալական հատկացումներ/ծախսեր հարաբերակցությունը
3.13.	Արտաբյուջետային մուտքեր/բյուջետային մուտքեր հարաբերակցությունը
3.14.	Արտաբյուջետային հաստիքների թիվ (բյուջետային աշխատավարձի ֆոնդ+սոցիալական հատկացումներ) հարաբերակցությունը
3.15.	Ծախսերի ծավալ/բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը
3.16.	Հարկերի ծավալ/փաստական պետական մուտքեր հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.1. Աշխատողների ընդհանուր թիվը, ուսանող/աշխատող հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.1	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Աշխատողների ընդհանուր թիվը	254	248	228	212	216
Ուսանողների թիվը	1648	1775	1970	1673	1535
Ուսանող/աշխատող հարաբերակցությունը	6,5	7,2	8,6	7,9	7,1

Տարեցտարի ուսանողների թվի նվազման հետ նվազել է նաև աշխատողների թիվը, և ուսանող/աշխատող հարաբերությունը 6,5 փոփոխվելով հասել է 7,1 արդյունքի:





Ցուցանիշ 3.2. Դասախոսական կազմ/ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.2	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Դասախոսական կազմը	98	111	99	97	107
Ուսումնաօժադակ և վարչական կազմ	74	81	99	86	64
Դասախոսական կազմ/ ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը	1,32	1,37	1	1,13	1,67

Վերջին երկու տարիներին դասախոսական կազմ/ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը փոքր-ինչ աճել է՝ պայմանավորված ինչպես դասախոսական կազմի ավելացմամբ, այնպես էլ ուսումնաօժանդակ և վարչական կազմի նվազմամբ:





Ցուցանիշ 3.3. Աշխատողների հոսունությունը՝ ընդունված/ազատված (%)

Ցուցանիշ 3.3	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Դասախոսական կազմում	91,6	138,4	70	82,4	31,9
Ընդհանուրում	113,3	178,5	58,3	51,9	30,8

Աշխատողների հոսունությունը բարձր տոկոսներ էր կազմում, որը պայմանավորված էր ժամավճարային հիմունքներով դասավանդողների համեմատաբար մեծ բաժնեմասով, սակայն վերջին տարիներին նվազման միտում է նկատվում,ինչը վկայում է աշխատողների կայունության աճի մասին:





Ցուցանիշ 3.4. Տարեկան բյուջեն
(տարեկան ընդհանուր եկամուտը՝ ֆինանասական և նյութական, հզ. դր.)

Ցուցանիշ 3.4	2009	2010	2011	2012	2013
Դրամական միջոցները տարեսկզբին	83 500	81 892	97 748	137 953	148 820
Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայությունից	235 617	278 292	290 143	315 356	332 564
Եկամուտներ պետական բյուջեից	80 161	90 758	90 500	85 743	82 209
Այլ եկամուտներ	3 625	6 471	4 460	9 111	14 544
Ընդամենը տարեկան եկամուտներ	319 403	375 521	385 103	410 210	429 317
Տարեկան բյուջեն	402 903	457 413	482 851	548 163	578 137

Վերջին հինգ տարիների ընթացքում հաստատության եկամուտները վճարովի ուսուցման համակարգից աճել են 41,2%-ով, իսկ պետական բյուջեից՝ մի փոքր նվազել: Այլ եկամուտների մասով իրականացվում են բազմաբնույթ քայլեր, որի առաջին օրինակը մասնաճյուղի զարգացման բիզնես ծրագրի մշակման մշտական հանձնաժողովի ստեղծումն է: Այդուհանդերձ, ընդհանուր եկամուտները հինգ տարիների ընթացքում աճել են 34,4%ով:



Ցուցանիշ 3.5. Օպերատիվ բյուջեն
(ծախսերի ծավալ/ուսանող և մուտքերի ծավալ/ուսանող հարաբերակցությունները, հզ. դր.)

Ցուցանիշ 3.5	2009	2010	2011	2012	2013
Եկամուտների ծավալ	402 903	457 413	482 851	548 163	578 137
Ուսանողների թիվը	1775	1970	1673	1582	1535
Եկամուտների ծավալ/ուսանող հարաբերակցությունը	226,9	232,2	288,6	346,5	376,6
Ծախսերի ծավալ	330 334	360 749	339 895	334 100	348 782
Ծախսերի ծավալ/ուսանող հարաբերակցությունը	186,1	183,1	203,2	211,2	227,2

Վերջին հինգ տարիներին մեկ ուսանողին բաժին ընկնող եկամուտները և հատկացվող ծախսերը աճել են, ինչը պայմանավորված է ծախսերի համեմատ եկամուտների ծավալի ավելի մեծ աճով:



Ցուցանիշ 3.6. Տարեվերջից տեղափոխվող մնացորդը (հզ. դր.)

Ցուցանիշ 3.6	2009	2010	2011	2012	2013
Տարեվերջից տեղափոխվող մնացորդը	83 449	81 892	94 743	137 953	220 324

Տարեվերջից տեղափոխվող մնացորդը վերջին հինգ տարիներին աճել է մոտ 164%-ով, որը կրճատում ռիսկային գործոնները և ֆինանսական կայունության հիմնական երաշխիքն է:





Ցուցանիշ 3.7. Արտաբյուջետային մուտքեր (ըստ աղբյուրների, ընդհանուր),հաշվեկշիռը մուտքերում (հզ. դր.)

Ցուցանիշ 3.7	2009	2010	2011	2012	2013
Ընդամենը տարեկան եկամուտներ	319 403	375 521	385 103	410 210	429 318
Արտաբյուջետային մուտքեր, այդ թվում՝	239 269	285 503	294 604	324 467	347 109
Վճարովի ուսուցման ծառայությունից	235 617	278 292	290 144	315 356	332 564
Բարեգործական եկամուտներ	-	3000	-	-	-
Առևտրային բանկերում ավանդ ձևակերպված գումարներից ստացվող %-ներից եկամուտներ	3 343	3 471	4 460	5 477	10 445
Այլ եկամուտներ	310	-	-	1 711	4 100
Տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտներում %	72,9	75,9	76,5	79,1	80,9

Ընդհանուր տարեկան եկամուտների մեջ արտաբյուջետային միջոցները կազմում են մոտ 80%, իսկ արտաբյուջետային միջոցների 95,8%-ից ավելին կազմել է վճարովի ուսուցման ծառայությունից ստացված եկամուտները: Բարեգործական և այլ եկամուտները կայուն չեն, իսկ դրամական շնորհներ և լրացուցիչ կրթական դասընթացներ չունենալու պատճառով մուտքերը 0-ական են, որի ուղղությամբ աշխատանքներ են տարվում:



Ցուցանիշ 3.8.Ուսումնական (ուսուցման) ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում(հզ. դր.)

Ցուցանիշ 3.8	2009	2010	2011	2012	2013
Տարեկան ընդհանուր ծախսեր	330 334	360 750	339 895	334 100	348 782
Ուսումնական ծախսեր	140 200	150 500	145 000	150 345	160 500
Ուսումնական ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (%)	42,4	41,7	42,7	45,0	46,1
Ուսանողների թիվը	1775	1970	1673	1582	1535
Տեսակարար ուսումնական ծախսեր	78,9	76,4	86,7	95,0	104,6

Յուրաքանչյուր տարվա ընդհանուր ծախսերի ավելացմանը զուգահեռ աճել են նաև ուսումնական ծախսերը. արդյունքում մեկ ուսանողին ընկնող ուսումնական ծախսերն ավելացել են:



Ցուցանիշ 3.9. Ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (հզ. դր)

Ցուցանիշ 3.9	2009	2010	2011	2012	2013
Տարեկան ընդհանուր ծախսեր	330 334	360 750	339 895	334 100	348 782
Ուսումնաօժանդակ ծախսեր	32 099	35 500	34 000	35 090	36 810
Ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը (%)	9,7	9,8	10,0	10,5	10,6

Ընդհանուր տարեկան ծախսերում ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը վերջին հինգ տարիների ընթացքում ավելացել է 14,7%-ով, որը պայմանավորված է նյութատեխնիկական և ուսումնաօժանդակ պայմանների բարելավմամբ:



Ցուցանիշ 3.10. Ուսման միջին վարձաչափը (հզ. դր.)

Ցուցանիշ 3.10	2009	2010	2011	2012	2013
ՀՀ քաղաքացիներ	230,0	230,0	230,0	230,0	250,0
ՀՀ-ում					

Ուսման միջին վարձաչափն սկսած 2009թ.-ից կայուն էր, իսկ 2013թ.-ին աճել է, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ դրամի արժեզրկմամբ:



Ցուցանիշ 3.11.Դասախոսական կազմի միջին աշխատավարձը, հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին

Ցուցանիշ 3.11	2009	2010	2011	2012	2103
Պրոֆեսոր	90 000	96 000	96 000	96 000	96 000
Դոցենտ	87 000	93 000	93 000	93 000	93 000
Ասիստենտ և դասախոս	81 000	89 000	89 000	89 000	89 000
Դասախոսական միջին աշխատավարձը	86 000	92 000	92 000	92 000	92 000
ՀՀ միջին աշխատավարձը	96 019	108 840	115 410	121 374	156 297
Դասախոսական կազմի միջին աշխատավարձի հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին	0,89	0,85	0,79	0,76	58,9

Դասախոսական կազմի միջին աշխատավարձի հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին վերջին երեք տարիների ընթացքում նվազել է, որը պայմանավորված է ԵՊՀ ԻՄ դասախոսական կազմի միջին աշխատավարձի անփոփոխ, իսկ հայաստանյան պաշտոնական միջին աշխատավարձի աճի տեմպերով:



Ցուցանիշ 3.12. Աշխատավարձ և սոցիալական հատկացումներ/ծախսեր հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.12	2009	2010	2011	2012	2013
Աշխատանքի վարձատրության ծախսեր (հզ.դր.)	211 351	234 400	229 426	217 000	212 759
Գործատուի կողմից վճարվող պարտադիր սոց. վճարներ (հզ. դր.)	40 491	43 700	46 600	41 300	66 097
Ընդամենը աշխատավարձի և սոց. վճարների ծախսեր (հզ. դր.)	251 842	234 400	276 026	258 300	278 856
Տարեկան ընդհանուր ծախսեր	330 334	360 750	339 900	334 100	348 782
Աշխատավարձ և սոցիալական հատկացումներ/ծախսեր հարաբերակցությունը	0,76	0,65	0,81	0,77	0,80

Ծախսերի ընդհանուր ծավալում գերակշռում են աշխատանքի վարձատրության և պարտադիր սոցիալական ապահովագրման վճարների ծախսերը (ավելի քան 75%), որը պայմանավորված է կազմակերպության գործունեության բնույթով, ինչպես նաև կազմակերպաիրավական ձևով:



Ցուցանիշ 3.13. Արտաբյուջետային մուտքեր/բյուջետային մուտքեր հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.13	2009	2010	2011	2012	2013
Արտաբյուջետային մուտքեր (հզ. դր.)	239 269	285 503	294 603	322 000	347 108
Պետական բյուջեից ստացվող մուտքեր (հզ. դր.)	89 165	90 075	90 500	85 743	82 209
Արտաբյուջետային մուտքեր/բյուջետային մուտքեր հարաբերակցությաունը	2,7	3,2	3,3	3,8	4,2

Վերջին հինգ տարիներին այս ցուցանիշը կայուն աճում է, քանի որ պետական բյուջեից ստացված ֆինանսավորումը գրեթե չի փոխվել, իսկ արտաբյուջետային մուտքերը անընդհատ ավելանում են:





Ցուցանիշ 3.14.Արտաբյուջետային հաստիքների թիվ (բյուջետային աշխատավարձի ֆոնդ + սոցիալական հատկացումներ) հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.14	2009	2010	2011	2012	2013
ԵՊՀ ԻՄ արտաբյուջետային հաստիքների թիվը	91	49	57	50	56
Բյուջետային աշխատավարձի ֆոնդ + սոցիալական հատկացումներ (մլն դր.)	60 858	63 000	61 900	66 000	66 000
Արտաբյուջետային հաստիքների թիվ x100 /բյուջետային աշխատավարձի ֆոնդ հարաբերակցությունը	0,149	0,077	0,092	0,075	0,1

Պետական բյուջեից ստացված մեկ միլիոն դրամի դիմաց ԵՊՀ ԻՄ-ի կողմից ստեղծված արտաբյուջետային հաստիքների թիվx100 /բյուջետային աշխատավարձի ֆոնդ հարաբերակցությունը փոփոխական է՝ պայմանավորված միջին ամսական աշխատավարձի բարձրացմամբ:



Ցուցանիշ 3.15. Ծախսերի ծավալ/բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.15	2009	2010	2011	2012	2013
Բյուջետային ծախսերի ծավալ (հզ. դր.)	89 165	90 758	90 500	85 743	82 209
Արտաբյուջետային ծախսերի ծավալ (հզ. դր.)	241 169	269 991	249 395	248 357	266 573
Ծախսերի ընդհանուր ծավալ (հզ. դր.)	330 334	360 749	339 895	334 100	348 782
Ծախսերի ծավալ/ բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը	3,71	3,98	3,76	3,89	4,24

Ծախսերի ընդհանուր ծավալ/բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը աճել է, որը պայմանավորված է արտաբյուջետային ծախսերի, հետևաբար նաև ընդհանուր ծախսերի ծավալի ավելացմամբ:



Ցուցանիշ 3.16. Հարկերի ծավալ / փաստական պետական մուտքեր հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.16	2009	2010	2011	2012	2013
ԵՊՀ ԻՄ-ի կողմից պետական բյուջե վճարվող հարկեր (հզ. դր.)	54 160	45 623	55 274	50 300	66 475
Պետական բյուջեից ԵՊՀ Իմ ֆինանսավորման չափը (հզ. դր.)	89 165	90 075	90 500	85 743	82209
Հարկերի ծավալ / փաստական պետական մուտքեր հարաբերակցությունը	0,61	0,51	0,61	0,59	0,81

Պետական բյուջեից ԵՊՀ ԻՄ ֆինանսավորման ծավալների ավելի քան 51%-ը ԵՊՀ ԻՄ-ի կողմից հետ է վերադարձվել պետական բյուջե՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսքով:



ԲՆԱԳԱՎԱՌ 4.

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

4.1.	Մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը
4.2.	Մեկ ուսանողին ընկնող ուսումնական (լսարանային) տարածքը
4.3.	Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակը
4.4.	Մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվը գրադարանում
4.5.	Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը, նոր գրքերի և ամսագրերի տարեկան թիվը
4.6.	Գրադարանի տարեկան աբոնենտների (ընթերցողների) հարաբերությունը ԵՊՀ ԻՄ ուսանողների և դասախոսների թվին
4.7.	Շահագործման ծախսերի տեսակարար կշիռը ԵՊՀ ԻՄ ծախսերի համագումարում
4.8.	Մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը
4.9.	Տարեկան էներգածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան էներգածախսը
4.10.	Տարեկան ջրածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան ջրածախսը

Ցուցանիշ 4.1. Մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը

Ցուցանիշ 4.1	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
ԵՊՀ ԻՄ ընդհանուր տարածքը /մ ^{2}/	13 195	13 195	13 195	13 195	13 195
Ուսանողների թիվը	1648	1775	1970	1673	1535
Մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը /մ^2/	8,0	7,4	6,7	7,9	8,6

Մեկ ուսանողին բաժին ընկնող ընդհանուր տարածքը վերջին երեք տարիներին ավելացել է ուսանողների թվի նվազման հաշվին: Այս ցուցանիշը չի համապատասխանում նորմատիվային արժեքին, որի համար պլանավորվում է կառուցել նոր մասնաշենք, չնայած նրան, որ ուսանողների թվաքանակի մեջ ներառված է նաև հեռակա բաժնի ուսանողները, որոնց դասապրոցեսը կազմակերպվում է երկրորդ հերթափոխով:



Ցուցանիշ 4.2. Մեկ ուսանողին ընկնող ուսումնական (լսարանային) տարածքը

Ցուցանիշ 4.2	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Ուսումնական տարածքը /մ²/	8 458	8 458	8 434	8 400	8 400
Ուսանողների թիվը	1648	1775	1970	1673	1535
Մեկ ուսանողին ընկնող ուսումնական տարածքը /մ²/	5,1	4,8	4,3	5,0	5,5

Վերջին տարիներին մեկ ուսանողին բաժին ընկնող ուսումնական տարածքն ավելացել է ավելի քան 7,8%-ով, որը առաջին հերթին պայմանավորված է ուսանողների թվաքանակի նվազմամբ:

Ուսանողների թվաքանակի մեջ ներառված է նաև հեռակա բաժնի ուսանողները, որոնց դասապրոցեսը կազմակերպվում է երկրորդ հերթափոխով:



Ցուցանիշ 4.3. Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակը

Ցուցանիշ 4.3	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Ակադեմիական խմբերի թիվը (միջինը՝ 36 ուսանող խմբում)	40	40	60	61	63
Լսարանային ֆոնդը (լսարանների քանակը)	43	55	54	53	53
Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակը	1,1	1,4	0,9	0,9	0,8

Վերջին երեք տարիների ընթացքում ակադեմիական խմբերի թիվը և լսարանային ֆոնդը գրեթե մնացել է նույնը, ինչը այդքան էլ լավ ցուցանիշ չէ, սակայն պետք է հաշվի առնել, որ 2011/12 ուստարվանից սկսած ուսանողների թվաքանակի մեջ ներառված է նաև հեռակա բաժնի ուսանողները, որոնց դասապրոցեսը կազմակերպվում է երկրորդ հերթափոխով:



Ցուցանիշ 4.4. Մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվը գրադարանում

Ցուցանիշ 4.4	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Գրքերի թիվը	9390	9517	10281	11021	12042
ԵՊՀ ԻՄ ուսանողների թիվը	1648	1775	1970	1673	1535
Մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվը գրադարանում	8,1	8,4	6,2	6,9	7,9

Ուսանողներին հասանելի գրականության թիվը տարեցտարի ավելացել է, սակայն այս ցուցանիշը դեռևս բարելավելու կարիք ունի: Զուգահեռ ստեղծվել է նաև էլեկտրոնային գրադարան՝ դասավանդվող բոլոր մոդուլների էլեկտրոնային դասախոսությունների և հիմնական դասագրքերի թվայնացված տարբերակներով:



Ցուցանիշ 4.5. Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը, նոր գրքերի և ամսագրերի տարեկան թիվը

Ցուցանիշ 4.5	2009	2010	2011	2012	2103
Նոր գրքերի տարեկան թիվը	101	270	387	682	1059
Նոր ամսագրերի տարեկան թիվը	3	33	93	58	120
Գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը (հզ. դր.)	316	299	145	229,3	516
ԵՊՀ ԻՄ ուսանողների թիվը	1648	1775	1970	1673	1535
Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը (դր.)	191,8	168,5	73,6	137,1	336,2

Չնայած նոր գրքերի և ամսագրերի թիվը անընդատ աճում է, այնուամենայնիվ, գրականություն ձեռք բերելու համար տարեկան ծախսերն փոփոխական են՝ պայմանավորված մասնագիտական գրքերի բարձր գներով:



Ցուցանիշ 4.6. Գրադարանի տարեկան աբոնենտների (ընթերցողների) հարաբերությունը ԵՊՀ ԻՄ ուսանողների և դասախոսների թվին

Ցուցանիշ 4.6	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Նոր աբոնենտների թիվը	382	297	254	270	265
Ընդհանուր աբոնենտների /ընթերցողների / թիվը	924	975	1054	1191	1272
ԵՊՀ ԻՄ դասախոսների և ուսանողների թիվը	1873	2081	1772	1679	1650
Տարեկան աբոնենտներ /դասախոսներ և ուսանողներ հարաբերությունը	0,493	0,469	0,595	0,709	0,77

2009-12 տարիների ընթացքում գրադարանի տարեկան աբոնենտների հարաբերությունը դասախոսների և ուսանողների թվին գրեթե չի փոխվել, իսկ վերջին երկու տարիներին գրանցվել է էական աճ, որը պայմանավորված է ինչպես գրադարանային ֆոնդի հարստացմամբ և արդիականացմամբ, այպես էլ համացանցին միացված համակարգիչների տեղադրմամբ:

Այս փաստը պայմանավորված է նաև նրանով, որ ԵՊՀ ԻՄ ուսանողները և դասախոսները հնարավորություն ունեն ու հաճախ օգտվում են ԵՊՀ՝ անհամեմատ հարուստ գրադարանային պաշարներից:



Ցուցանիշ 4.7. Շահագործման ծախսերի տեսակարար կշիռը ԵՊՀ ԻՄ ծախսերի հանրագումարում

Ցուցանիշ 4.7	2009	2010	2011	2012	2013
Շահագործման ծախսերի ծավալը (հզ. դր.)	78 492	95 000	114 500	113 000	118 820
Ընդհանուր ծախսերի ծավալը (հզ. դր.)	330 334	360 700	339 900	334 100	348 782
Շահագործման ծախսերի տեսակարար կշիռը (%)	23,76	26,34	33,69	33,82	34,1

Շահագործման ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում տատանվում է 24-34% սահմաններում:



Ցուցանիշ 4.8.Մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը

Ցուցանիշ 4.8	2009	2010	2011	2012	2013
Տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը (հզ. դր.)	4 241	1 015	1 167	5 504	6474
ԵՊՀ ԻՄ ուսանողների թիվը	1648	1775	1970	1673	1535
Մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը (հզ. դր.)	2,6	0,57	0,59	3,29	4,22

2008-09 տարիներին ուսանողական համակազմի ավելացմանը զուգընթաց՝ աճել են նաև տարեկան ձեռքբերված սարքավորումների ծախսերը: 2012թ.-ից սկսած վերոնշյալ ծախսերը կտրուկ ավելացել են՝ պայմանավորված համակարգչային և այլ լաբորատորիաների ստեղծմամբ, արդիականացմամբ և վերազինմամբ:



Ցուցանիշ 4.9 Տարեկան էներգածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան էներգածախսը

Ցուցանիշ 4.9	2009	2010	2011	2012	2013
Էներգիայի տարեկան ծախսը (հզ. դր.)	4 951	5 138	5 720	4 448	4505
Ուսանողների և աշխատակիցների միջին տարեկան թիվը	2005	1854	1951	1885	1751
Տեսակարար էներգածախսը (հզ. դր.)	2,5	2,8	2,9	2,4	2,6

Տարեկան էներգածախսը վերջին երկու տարիներին նվազել է՝ պայմանավորված ինչպես ուսանողների և աշխատողների թվի նվազմամբ, այնպես էլ ջեռուցման ավելի արդյունավետ միջոցների կիրառմամբ:



Ցուցանիշ 4.10. Տարեկան ջրածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան ջրածախսը

Ցուցանիշ 4.10	2009	2010	2011	2012	2013
Ջրամատակարարման և ջրահեռացման տարեկան ծախսը (հզ. դր.)	611	717	820	864	849
Ուսանողների և դասախոսների միջին տարեկան թիվը	1854	1824	1921	1885	1650
Ջրի տեսակարար ծախսը (հզ. դր./մարդ)	0,33	0,39	0,43	0,46	0,52

2009թ. տարեկան ջրածախսը նվազել է, ինչը ներքին ցանցի կորուստների վերացման արդյունք էր, սակայն 2009-2012թ. աճել է՝ պայմանավորված շուրջօրյա ջրամատակարարմամբ:





ԲՆԱԳԱՎԱՌ 5. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

5.1.	Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը, հաշվեկշիռը
5.2.	Հիմնական դասախոս/ասպիրանտ քանակական հարաբերակցությունը
5.3.	Գիտական հրատարակություններ/դասախոսներ հարաբերակցությունը
5.4.	Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը, հաշվեկշիռը
5.5.	Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թիվը, հաշվեկշիռը, համակարգիչների թիվ/մասնակից հարաբերակցությունը
5.6.	Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապի կետերի թիվը, հաշվեկշիռը

Ցուցանիշ 5.1. Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը, հաշվեկշիռը

Ցուցանիշ 5.1	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը	14	4	-	2	10
Հիմնական դասախոսական կազմը	98	111	99	97	115
Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների հաշվեկշիռը (%)	14,3	3,6	-	2,1	8,7

2010-13թթ.-ին հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվն նվազել է, ինչն անբավարար ցուցանիշ է, սակայն այս ուղղությամբ տարվում են համապատասխան աշխատանքներ, որի արդյունքը ակնհայտ երևում է 2013/14 ուստարում:



Ցուցանիշ 5.2. Հիմնական դասախոս/ասպիրանտ(հայցորդ) քանակական հարաբերակցությունը

Ցուցանիշ 5.2	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Հիմնական դասախոսական կազմ	98	111	99	97	107
Ասպիրանտներ /հայցորդներ/	2	2	7	8	18
Հիմնական դասախոս/ասպիրանտ քանակական հարաբերակցությունը	49	55,5	14,1	12,1	5,9

Հիմնական դասախոս/ասպիրանտ (հայցորդ) քանակական հարաբերությունը նվազում է, որը հիմնականում պայմանավորված է ասպիրանտների(հայցորդների) աճով:



Ցուցանիշ 5.3. Գիտական հրատարակություններ/դասախոսներ հարաբերակցությունը

Ցուցանիշ 5.3	2008/09	2009/10	2010/11	2011/12	2012/13
Հիմնական դասախոսական կազմը	71	98	111	99	115
Գիտական հրատարակությունների թիվը	22	58	133	94	97
Գիտական հրատարակություններ/դասախոսներ հարաբերակցությունը	0,31	0,59	1,20	0,97	0,84

Գիտական հրատարակությունների թիվն 2008/09 ուստարվա համեմատությամբ ավելացել է, սակայն մեկ դասախոսին ընկնող հրատարակությունների թիվը դեռևս բարելավելու կարիք ունի:



Ցուցանիշ 5.4. Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը, հաշվեկշիռը

Ցուցանիշ 5.4	2008/09	2009/10	2010/11	2011/12	2012/13
Ընդհանուր հրատարակությունների թիվը	22	58	149	110	97
Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը	4	11	22	25	23
Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների հաշվեկշիռը (%)	18,2	18,9	14,8	22,7	23,8

Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվն աճել է, մինչդեռ վերջին տարում նրա հաշվեկշիռն ընդհանուրում մնացել է գրեթե անփոփոխ:



Ցուցանիշ 5.5. Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թիվը և հաշվեկշիռը, համակարգիչների թիվ/մասնակից հարաբերակցությունը

Ցուցանիշ 5.5	2008/09	2009/10	2010/11	2011/12	2012/13
Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թիվը	1	7	11	15	9
Համակարգիչների ընդհանուր թիվը	60	95	101	93	113
Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների հաշվեկշիռը (%)	1,7	7,4	10,9	16,1	8,0
Հետազոտական նախագծերում ընդգրկված մասնակիցների թիվը	8	14	15	15	10
Համակարգիչների թիվ/մասնակից հարաբերակցությունը	0,13	0,5	0,73	1	11,3

Վերջին տարում հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թիվը նվազել է, որը համակարգիչների ընդհանուր թվաքանակում կազմում է մոտ 8%: Այն պայմանավորված է ինչպես հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թվի նվազմամբ, այնպես էլ համակարգիչների ընդհանուր թվի ավելացմամբ:





Ցուցանիշ 5.6. Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապի կետերի թիվը, հաշվեկշիռը

Ցուցանիշ 5.6	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապի կետերի թիվը	1	3	3	5	9
Ինտերնետային կապի կետերի ընդհանուր թիվը	4	55	70	86	110
Հաշվեկշիռը (%)	25	5,5	4,3	5,8	8,2

Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետ կապերի հաշվեկշիռը վերջին տարիներին աճել է, սակայն դեռևս այն անբավարար ցուցանիշ է:



ԲՆԱԳԱՎԱՌ 6. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

6.1.	Դասախոսների ներգրավվածությունը միջազգային նախագծերում
6.2.	Համալսարանական պարբերականների թիվը, պարբերականությունը
6.3.	Հանրությանը տրամադրվող տեղեկատվական հրատարակությունների թիվը

Ցուցանիշ 6.1. Դասախոսների ներգրավվածությունը միջազգային նախագծերում

Ցուցանիշ 6.1	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Միջազգային նախագծերում ներգրավված դասախոսների թիվը	4	2	4	4	9
Հիմնական դասախոսական կազմը	98	111	99	97	115
Միջազգային նախագծերում ներգրավված դասախոսների հաշվեկշիռը (%)	4,1	1,8	4,0	4,1	7,9

Միջազգային նախագծերում ներգրավված դասախոսների թիվն աճել է վերջին տարիների ընթացքում, սակայն հեռու է բավարար լինելուց: Այս իրողությունը բացատրվում է նրանով, որ ԵՊՀ ԻՄ-ի դասախոսներն սկսել են համագործակցել ԵՊՀ միջազգային գործընկերների հետ:



Ցուցանիշ 6.2. Համալսարանական պարբերականների թիվը, պարբերականությունը

Ցուցանիշ 6.2	2008/09	2009/10	2010/11	2011/12	2012/13
Համալսարանական պարբերականներ	1	1	1	3	3

Համալսարանում հրատարակվում են պարբերականներ, որոնց թիվը գրեթե անփոփոխ էր, սակայն վերջին երկու տարում երկուսով ավելացել է:





Ցուցանիշ 6.3. Հանրությանը տրամադրվող տեղեկատվական հրատարակությունների թիվը

Ցուցանիշ 6.3	2009/10	2010/11	2011/12	2012/13	2013/14
Հանրությանը տրամադրվող տեղեկատվական հրատարակությունների թիվը	3	3	3	3	3
Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք	4	5	5	5	5

Հանրությանը տրամադրվող տեղեկատվական հրատարակությունների թիվը գրեթե անփոփոխ է, ինչը անբավարար ցուցանիշ է ժամանակակից շուկայական հարաբերությունների պայմաններում:2009թ.-ից հրատարակվում է նաև դասընթացների տեղեկագիրքը, որը տրամադրվում է բոլոր ուսանողներին: